ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՌԱՀ-ԳՀԾՁԲ-17/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **13.06.2017թ.**
Ժամը 11:00

«ՀՌԱՀ-ԳՀԾՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.

1. *Հայտերի գնահատման արդյունքները՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.*

«Ադմոսֆեր Արմենիա» ՓԲ ընկերության կողմից գնանշման հարցման գնման ընթացակարգին ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. *Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացվող պահանջները.*

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացրել իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը (փաստաթղթերը):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. *Ներկայացված փաստաթղթերի համապատասխանության գնահատումը, գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը.*

Հանձնաժողովը բավարար է գնահատել 2-րդ կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. *«ՀՌԱՀ-ԳՀԾՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հրապարակում.*

Հանձնաժողովը որոշեց՝ ընտրված մասնակից ճանաչել «Ադմոսֆեր Արմենիա» ՓԲ ընկերությանը և պայմանագիր կնքելու նպատակով առաջարկել ծանոցվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. ***Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հրապարակելու մասին.***

«ՀՌԱՀ-ԳՀԾՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրի կնքման կամ պայմանագիրը չկնքելու դեպքում՝ այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացույցային օրվա ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)

ՀՌԱՀ աշխատակազմի գործերի կառավարիչ **Ս. Գասպարյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ (ԳՊ/ՄՀՄ)

ՀՌԱՀ աշխատակազմի գործերի կառավարչության գլխավոր մասնագետ, գնումները համակարգող **Ա. Մատինյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության պետ **Ա. Վարդանյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորվման վարչության պետ **Դ. Մարգարյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ **Ա. Թաթոյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ **Է. Գրիգորյան**